<<Ստացիր զեղչի կտրոն պատվերի դիմաց Visa քարտով վճարելու դեպքում>> Ակցիայի անցկացման կանոնները (այսուհետ՝ <<Կանոններ>>)

Սույն Կանոնները կարգավորում են AliExpress- aliexpress.com, aliexpress.ru կայքերում, AliExpress և AliExpress Ռուսաստան հավելվածներում iPhone-ի և Android-ի համար, AliExpress և AliExpress Ռուսաստան հավելվածներում Android և iPads պլանշետների համար, ինչպես նաև համանման պայմաններով AliExpress բջջային տարբերակի կայքերի և հավելվածների համար (այսուհետ՝ <<Կայք>>) անցկացվող <<Ստացիր զեղչի կտրոն պատվերի դիմաց Visa քարտով վճարելու դեպքում>> ակցիայի (այսուհետ՝ <<Ակցիա>>) անցկացման կարգը: Ակցիան հասանելի չի լինի Համացանցում https://vk.com/ կայքում, <<ՎԿոնտակտե>> հավելվածներում, ինչպես նաև Համացանցում https://ok.ru/ կայքում, <<Օդնոկլասնիկի>> հավելվածներում ցանկացած տեսակի սարքերի համար:

1. **Ակցիան և մրցանակային ֆոնդը**
   Ակցիայի անցկացման ժամկետի ընթացքում (տե՛ս ստորև 2-րդ կետը) Ակցիային մասնակցելու իրավունք ունեցող (ինչպես սահմանված է 5-րդ կետում) և ստորև 6-րդ կետում նշված պայմանները կատարած յուրաքանչյուր Մասնակից ստանում է հետևյալ մրցանակը (այսուհետ նաև՝ <<Կտրոն>>, <<Մրցանակ>>)՝

1.1. Հայաստանի տարածքի սահմաններում առաքման հասցեով պատվերների համար՝ զեղչի կտրոն ստորև բերված աղյուսակի համաձայն՝ աղյուսակում նշված գումարի չափով Կայքում միանվագ գնում կատարելու և այդ գնման դիմաց Visa քարտով վճարելու պայմանով:

Պատվերի նվազագույն գումարը	Կտրոնով զեղչի չափը
Սկսած 5 ԱՄՆ դոլարից*	0,5 ԱՄՆ դոլար*
Սկսած 10 ԱՄՆ դոլարից*	1 ԱՄՆ դոլար*
Սկսած 20 ԱՄՆ դոլարից*	2 ԱՄՆ դոլար*
Սկսած 30 ԱՄՆ դոլարից*	3 ԱՄՆ դոլար*
Սկսած 50 ԱՄՆ դոլարից*	5ԱՄՆ դոլար*

Այսուհետ ըստ Կանոնների տեքստի 1.1. ենթակետում նշված մրցանակները համատեղ կոչվում են <<Կտրոններ>>:

*Կտրոնով զեղչի գումարը Կայքում տրամադրվում է ԱՄՆ դոլարով և ստորև 6-րդ կետում նշված պայմանները կատարելու դեպքում Չափանիշներին համապատասխանող մասնակցին հաշվեգրվելու պահին փոխարկվում է Մասնակցի համապատասխան երկրի տեղական արժույթի՝ Չափանիշներին համապատասխանող մասնակցի կողմից ստորև 6-րդ կետում նշված գործողությունները կատարելու ամսաթվի դրությամբ Կայքի փոխարժեքով՝ կախված փոխարժեքների տատանումներից, կայքի կամ բջջային հավելվածի օգտագործվող

տարբերակից, այլ գործոններից: Հետևաբար, Կտրոնով զեղչի կոնկրետ չափը Մասնակցի համապատասխան երկրի տեղական արժույթով որոշվելու է Չափանիշներին համապատասխանող մասնակցի կողմից ստորև 6-րդ կետում նշված գործողությունները կատարելու ամսաթվի դրությամբ:
Կտրոնն օգտագործելու նպատակով միանվագ գնման նվազագույն գումարը որոշելու համար միանվագ գնման այդպիսի նվազագույն գումարը Մասնակցի համապատասխան երկրի տեղական արժույթով փոխարկվում է ԱՄՆ դոլարի Չափանիշներին համապատասխանող մասնակցի կողմից ստորև 6-րդ կետում նշված գործողությունները կատարելու ամսաթվի դրությամբ Կայքի փոխարժեքով՝ կախված փոխարժեքների տատանումներից, կայքի կամ բջջային հավելվածի օգտագործվող տարբերակից, այլ գործոններից:
Կտրոնով զեղչի կոնկրետ չափի, ինչպես նաև Մասնակցի համապատասխան երկրի տեղական արժույթով Կտրոնն օգտագործելու համար Չափանիշներին համապատասխանող մասնակցի կողմից գնման նվազագույն գումարի չափը պահպանելու վերաբերյալ արդիական տեղեկատվությունը հասանելի է Կայքում Չափանիշներին համապատասխանող մասնակցի կողմից ստորև 6-րդ կետում նշված բոլոր գործողությունները կատարելու ամսաթվի դրությամբ:

Կտրոնով նախատեսված զեղչը կիրառվում է ակնթարթորեն Չափանիշներին համապատասխանող մասնակցի կողմից ստորև 6-րդ կետում նշված պայմանները կատարելու դեպքում, բացառապես ընթացիկ պատվերի համար, որի համար հաշվեգրվում է Կտրոնը:

Յուրաքանչյուր Մասնակից Ակցիայի անցկացման ժամանակահատվածում կարող է ստանալ գնորդի ոչ ավել, քան (մեկ) Կտրոն:

Կտրոնների քանակը սահմանափակ է:

Կտրոնները կարող են օգտագործվել միայն Ակցիայի անցկացման ժամանակահատվածում ընթացիկ պատվերի համար, որի շրջանակներում տեղի է ունենում Կտրոնի հաշվեգրում:

Մրցանակի արժեքի դրամական համարժեքի վճարում չի իրականացվում: Մասնակցի ցանկությամբ Մրցանակի փոխարինում այլ մրցանակներով չի կատարվում:

2. Ակցիայի անցկացման ժամկետը

Ակցիայի անցկացման ժամկետը՝ 27.08.2021թ. ժամը 10:00:00-ից մինչև 30.09.2021թ. ժամը 09:59:59 (մոսկովյան ժամանակով) (այսուհետ՝ <<Ակցիայի անցկացման ժամկետ>>): Ակցիան կարող է դադարեցվել վաղաժամկետ ինչպես ամբողջովին, այնպես էլ անցկացման կոնկրետ երկրի նկատմամբ՝ այդպիսի երկրի համար

Ակցիայով նախատեսված բոլոր Կտրոնները տրամադրելու դեպքում, ինչպես սահմանված է վերոնշյալ 1-ին կետում (կախված այն բանից, թե որը տեղի կունենա ավելի վաղ):

3. **Ակցիայի կազմակերպիչը**

ALIEXPRESS RUSSIA HOLDING PTE. LTD, ընկերություն, որը գրանցված է Սինգապուրի օրենսդրության համաձայն, գրանցման հասցե՝ 8 Shenton Way, #45-01 AXA Tower, Singapore 068811/8 Շենտոն Վէյ, N 45-01, ԱՔՍԱ Թաուեր, Սինգապուր, 068811 (այսուհետ՝ <<Կազմակերպիչ>>):

4. **Ակցիայի անցկացման վայրը**

Ակցիան անցկացվում է Կայքում՝ Կանոններում սահմանված բացառություններով:

5. **Ակցիայի մասնակիցները**

Ակցիային կարող են մասնակցել միայն գործունակ ֆիզիկական անձինք, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի, Ուզբեկստանի, Ղրղզստանի, Հայաստանի 18 տարին լրացած և Կայքում գրանցված քաղաքացիները: Ընդ որում Կազմակերպչի կառավարման մարմինների աշխատակիցներին, պաշտոնատար անձանց և անդամներին, նրանց մերձավոր բարեկամներին, դուստր և փոխկապակցված ընկերություններին, Ակցիայի կազմակերպմանը և աջակցմանը մասնակցող ցանկացած ընկերությանը, ինչպես նաև դրանց գործակալներին չի թույլատրվում մասնակցել Ակցիային:

6. **Ակցիայի անցկացման, Կտրոնների հաշվեգրման կարգը**

6.1. Ակցիային մասնակցելու և Կանոնների 1.1. կետով նախատեսված մրցանակը ստանալու համար Ակցիայի անցկացման Ժամկետի ընթացքում Մասնակցին անհրաժեշտ է՝ կատարել միանվագ գնում Կայքում և վճարել դրա դիմաց Visa քարտի օգնությամբ ստորև բերված աղյուսակի համաձայն (ըստ Կանոնների 1-ին բաժնում սահմանված փոխարժեքի), այն պատվերների համար, որոնց մատակարարման հասցեն գտնվում է Ուզբեկստանի, Ղրղզստանի, Հայաստանի, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի տարածքների սահմաններում:

Պատվերի նվազագույն գումարը	**Կտրոնով զեղչի չափը**
Սկսած 5 ԱՄՆ դոլարից*	0,5 ԱՄՆ դոլար*
Սկսած 10 ԱՄՆ դոլարից*	1 ԱՄՆ դոլար*
Սկսած 20 ԱՄՆ դոլարից*	2 ԱՄՆ դոլար*
Սկսած 30 ԱՄՆ դոլարից*	3 ԱՄՆ դոլար*
Սկսած 50 ԱՄՆ դոլարից*	5ԱՄՆ դոլար*

*Պատվերի նվազագույն գումարը և Կտրոնով զեղչի չափը սահմանվում են ըստ Կանոնների 1-ին բաժնում սահմանված փոխարժեքի:

6.2. Ակցիային մասնակցելու և Կանոնների 1.2. կետով նախատեսված մրցանակը ստանալու համար Ակցիայի անցկացման Ժամկետի ընթացքում Մասնակցին անհրաժեշտ է՝ կատարել միանվագ գնում Կայքում և վճարել դրա դիմաց Ալֆա-Բանկ AliExpress-ի կողմից թողարկված Visa քարտի օգնությամբ (քարտի համարի առաջին 6 թվերը՝ 415259) ստորև բերված աղյուսակի համաձայն (ըստ Կանոնների 1-ին բաժնում սահմանված փոխարժեքի), այն պատվերների համար, որոնց մատակարարման հասցեն գտնվում է Բելառուսի Հանրապետության տարածքի սահմաններում:

Պատվերի նվազագույն գումարը	Կտրոնով զեղչի չափը
Սկսած 5 ԱՄՆ դոլարից*	1 ԱՄՆ դոլար*
Սկսած 10 ԱՄՆ դոլարից*	2 ԱՄՆ դոլար*
Սկսած 20 ԱՄՆ դոլարից*	5 ԱՄՆ դոլար*
Սկսած 30 ԱՄՆ դոլարից*	7 ԱՄՆ դոլար*
Սկսած 50 ԱՄՆ դոլարից*	7ԱՄՆ դոլար*

*Պատվերի նվազագույն գումարը և Կտրոնով զեղչի չափը սահմանվում են ըստ Կանոնների 1-ին բաժնում սահմանված փոխարժեքի:

6.4. Կտրոնը չի հաշվեգրվում և զեղչը չի տարածվում Visa Business կոմերցիոն քարտերով կատարված պատվերների վրա:

6.5. Ակցիան չի տարածվում, Կտրոնը չի հաշվեգրվում և Կտրոնով զեղչը Ակցիայի շրջանակներում չի կիրառվում Մասնակիցների կողմից ApplePay, GooglePay համակարգերով վճարվող պատվերների համար:

6.6. Կտրոնները, որոնք կարող են տրամադրվել կամ հանձնվել կամ այլ կերպ ստացվել և/կամ հասանելի լինել Մասնակցին սույն Ակցիային մասնակցելու շրջանակներում, ՉԵՆ կիրառվում Համացանցում https://vk.com/ կայքում, ՎԿոնտակտե հավելվածում, AliExpress հավելվածում Վկոնտակտե բջջային հավելվածում, ինչպես նաև Համացանցում https://ok.ru/ կայքում, <<Օդնոկլասնիկի>> հավելվածներում ցանկացած տեսակի սարքերի համար, AliExpress Ռուսաստան բջջային հավելվածի <<Есть!>> ծառայությունում, բջջային հեռախոսի հաշվի համալրման հետ կապված ծառայությունների համար, ցանկացած կողմնակի ծառայություններում (եթե այդպիսի ծառայությունները հասանելի են Կայքում) օգտատերերի ակաունտներին կապված հաշվի համալրման ծառայությունների համար, ինչպես նաև Կայքի այլ ծառայությունների համար (եթե սահմանված է Կայքի կողմից):

6.7. Ակցիային մասնակցելու շրջանակներում ձեռք բերված ապրանքը Մասնակցի կողմից վերադարձնելու դեպքում տրված Մրցանակը համարվում է օգտագործված և վերականգնման ենթակա չէ, իսկ նոր Մրցանակ չի հաշվեգրվում: Կտրոնի միջոցով

կատարված գնման արժեքը հետ է վերադարձվում՝ հանած կտրոնի անվանական արժեքը (միայն ապրանքի փաստացի վճարված արժեքը) Կայքում վաճառքի կանոններով և Կայքի այլ օգտատիրական փաստաթղթերով նախատեսված կարգով և ժամկետներում:

7. Ընդհանուր կանոններ

a. Մասնակցելով Ակցիային Մասնակիցը համաձայնվում է ընդունել և ամբողջովին հետևել Ակցիայի անցկացման Կանոններին:
b. Ցանկացած խարդախություն և/կամ Ակցիայի շրջանակներում Մասնակցի կողմից տրված/ստացված առաջարկների չարաշահում (ինչպես սահմանված է Կազմակերպչի կողմից իր հայեցողությամբ) կզրկի Մասնակցին Կտրոն ունենալու իրավունքից:
c. Իշխանության իրավասու մարմինների որոշմամբ կամ լուրջ ցանցային հարձակման կամ համակարգի խափանման պատճառով Ակցիայի կասեցման կամ դադարեցման դեպքում Ակցիան կարող է դադարեցվել վաղաժամկետ: Այդպիսի իրավիճակը ֆորս-մաժորային հանգամանք է, և Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում նման իրադարձությունների արդյունքում ծագած վնասների կամ պահանջների համար:
d. Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում ցանկացած անժամանակ, հեռացված, հետաձգված, թերի, անընթեռնելի, սխալ ուղարկված կամ չստացված գրառումների, պատասխանների կամ էլեկտրոնային փոստով կամ այլ եղանակով ուղարկվող այլ նամակագրության համար:
e. Այն դեպքում, երբ Ակցիան կասեցվում է համակարգչային ցանցի հետ կապված որևէ պատճառով (տեխնիկական պատճառներով), դուք համաձայնվում եք այն բանի հետ, որ Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում ցանկացած վնասի համար:
f. Ցանկացած գործարքի ժամանակը և գործողության ժամկետը և/կամ Ակցիային մասնակցելու Ձեր իրավունքը որոշվում է Կազմակերպչի կողմից իր հայեցողությամբ՝ Կազմակերպչի գրառման հիման վրա: Ձեր կողմից անցկացված գործարքի վերաբերյալ գրառման և Կազմակերպչի մոտ պահվող տեղեկատվության միջև անհամապատասխանության դեպքում Կազմակերպչի գրառումը պետք է լինի վերջնական և պարտադիր Մասնակցի համար:
g. Կազմակերպիչն իրեն իրավունք է վերապահում փոփոխություններ մտցնել այդ Կանոնների մեջ, ինչպես նաև փոփոխել կամ դադարեցնել Ակցիան առանց նախնական ծանուցման: Վեճերի առաջացման դեպքում Կազմակերպչի որոշումը վերջնական է և պարտադիր:
h. Կազմակերպիչն իրեն իրավունք է վերապահում և բացարձակ հայեցողություն ունի չեղյալ հայտարարելու կամ հետ կանչելու Ակցիային մասնակցելու կամ ցանկացած Կտրոններ օգտագործելու Մասնակցի իրավունքը, եթե հաստատվի Մասնակցի կողմից սույն Կանոնների խախտում կամ անազնիվ, չարամիտ, խարդախ,

անօրինական կամ Կազմակերպչի կարծիքով անտեղի գործողության փաստ Ակցիային մասնակցելու ընթացքում:
i. Համաձայնվելով սույն Կանոնների հետ՝ Մասնակիցն իր համաձայնությունն է տալիս Կազմակերպչին իր անձնական տվյալների մշակման վերաբերյալ, ներառյալ, բայց չսահմանափակվելով, դրանց փոխանցումը Կազմակերպչի հետ նույն խմբին պատկանող ընկերություններին՝ Մասնակցի մասնակցությունն Ակցիային ապահովելու և դրա պայմանների համաձայն նրան առաջարկներ և Կտրոններ տրամադրելու նպատակով: Անձնական տվյալների մշակելու համաձայնությունը տրվում է առանց գործողության ժամկետի սահմանափակման: Մասնակիցն իրավունք ունի ցանկացած ժամանակ հետ կանչելու անձնական տվյալները մշակելու վերաբերյալ իր համաձայնությունը՝ գրավոր ձևով տեղեկացնելով այդ մասին Կազմակերպչին սույն Կանոնների 3-րդ կետում նշված հասցեով: Անհատական տվյալները մշակելու համաձայնության հետկանչը նշանակում է, որ Մասնակիցը հրաժարվում է Ակցիային հետագա մասնակցությունից:
j. Յուրաքանչյուր Կտրոն կարող է օգտագործվել միայն մեկ անգամ յուրաքանչյուր առանձին Մասնակցի կողմից և միայն Կայքերում գնումների հետ կապված, որոնց նկատմամբ կարող է կիրառվել Կտրոնը:
k. Կտրոները կարող են օգտագործվել Կտրոնի վրա և սույն Կանոններում նշված գործողության ժամկետի ընթացքում: Կտրոնի գործողության ժամկետը լրանալուց հետո Կտրոնը դառնում է անվավեր, և դրա ամբողջ անվանական արժեքը (առկայության դեպքում) ինքնաբերաբար հանվում է:
l. Բոլոր կտրոնները պետք է օգտագործվեն ամբողջովին, և Կտրոնի անվանական արժեքը չի կարող բաժանվել:

8.Կանոնների տարընթերցվածքները

Այն դեպքում, եթե սույն Կանոնների որևէ պայման հակասում է Կայքի այլ բաժնում հասանելի կանոններին և (կամ) դրանց հետ կապված տեղեկատվությանը, սույն Կանոնների պայմաններն ունեն գերակայություն:

9. Պատասխանատվությունը

9.1. ԿԻՐԱՌՎՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓՈՎ ՈՉ ՄԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՈՒՄ ԱԿՑԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԿՐՈՒՄ ԱԿՑԻԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԿԱՄ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԾԱԳԱԾ ՑԱՆԿԱՑԱԾ ՈՒՂՂԱԿԻ, ԱՆՈՒՂՂԱԿԻ, ՀԱՏՈՒԿ, ՊԱՏԱՀԱԿԱՆ, ՏՈՒԳԱՆՔԱՅԻՆ ԿԱՄ ԱՅԼ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ (ՆԵՐԱՌՅԱԼ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՏՎՅԱԼՆԵՐԻ, ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ՇԱՀՈՒՅԹԻ ԿՈՐՈՒՍՏԸ), ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԿՐՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ, ԵՐԱՇԽԻՔԻ, ԴԵԼԻԿՏԻ (ՆԵՐԱՌՅԱԼ ԱՆԶԳՈՒՇՈՒԹՅԱՄԲ ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼԸ), ՕԲՅԵԿՏԻՎ ՄԵՂՍԱԳՐՄԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԾԱԳՈՂ ՈՐՆԷ ՊԱՀԱՆՋՈՎ ԿԱՄ ԱՅԼ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՎ՝ ԱՆԿԱԽ ԱՅՆ ԲԱՆԻՑ, ԶԳՈՒՇԱՑՎԵԼ Է ԱՐԴՅՈՔ ԱԿՑԻԱՅԻ

ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՎՆԱՍՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:

9.2. Մրցանակները ստանալու պահից Ակցիայի մասնակիցը ամբողջական պատասխանատվություն է կրում բոլոր հարկերի վճարման և այլ առկա պարտադիր վճարումների համար, որոնք սահմանված են գործող կիրառվող օրենդրությամբ: Մասնակիցն իր համաձայնությունն է տալիս իր մասին հարկային մարմին տեղեկություններ ներկայացնելուն, եթե դա կպահանջվի կիրառվող օրենսդրության համաձայն:

9.3. Կազմակերպիչը ոչ մի պատասխանատվություն չի կրում Մասնակցի կողմից Մրցանակների օգտագործման և/կամ Ակցիային մասնակցելու արդյունքում կրած ցանկացած վնասի համար:

9.4. Կազմակերպիչը պատասխանատու չէ Համացանցում սոցիալական ցանցերի հնարավոր գործողությունների համար, այդ թվում այդ կայքերի աշխատանքի խափանումների, սոցիալական ցանցերի կայքերի նախաձեռնությամբ Կազմակերպչի խմբակցությունների կամ Մասնակիցների էջերի հեռացման, խմբակցության հետևորդ դառնալու, տվյալ կայքերի աշխատանքում տեխնիկական խափանումների պատճառով հրապարակումներ/պոստեր տեղադրելու անհնարինության համար:

10.Վեճերը

Մասնակիցն ընդունում և համաձայնում է, որ Կազմակերպիչը և նրա հետ փոխկապակցված անձինք պատասխանատվություն չեն կրում իր կամ այլ անձանց առջև Ակցիային Մասնակցի մասնակցելու հետ կապված վեճերի և պահանջների առաջացման դեպքում:

11. Կիրառվող իրավունքը

Սույն Ակցիան կարգավորվում է, մեկնաբանվում և իրականացվում է Հոնկոնգի օրենսդրության համաձայն: Սույն Կանոնների և Ակցիայի անցկացման հիման վրա ծագող կամ դրանց հետ կապված ցանկացած դատական հայց, պահանջ կամ քննություն ենթակա են քննման Հոնկոնգի իրավասու դատարանում: